ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
CORRUPTION PREVENTION COMMISSION

Հայաստանի Հանրապետություն, Երեւան, 0009, Կորյուն 15, հեռ. (37412) 77 77 25
Koryun Street 15, 0009, Yerevan, Republic of Armenia, tel. (37412) 77 77 25

16.10.2025թ.
01/3983-2025

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ

Ավագանու հարգելի՛ անդամներ,

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Գորիս համայնքի ավագանու կողմից համայնքի ղեկավարի լիազորությունների դադարեցման հարցի քննարկման նպատակով ներկայացվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ 2025 թվականի հոկտեմբերի 13-ի «Առուշ Առուշանյանի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման առկայության մասին» թիվ 03/2025-Ա/Վ եզրակացությունը և կից ներկայացվող նյութերն ըստ ցանկի:

Տեղեկացնում եմ, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 17-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված իրավադրույթների համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձի՝ սույն դեպքում համայնքի ղեկավարի, կողմից անհամատեղելիության պահանջները խախտելը նրա լիազորությունների դադարեցման հիմք է հանդիսանում:

Միաժամանակ, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածը նախատեսում է, որ իրավասու մարմինը պարտավոր է քննարկել Հանձնաժողովի եզրակացությունը և արդյունքների մասին ողջամիտ ժամկետում, բայց ոչ ուշ, քան եզրակացությունը ստանալու պահից 15-օրյա ժամկետում տեղեկացնել Հանձնաժողովին:

Վերոգրյալի համատեքստում խնդրում եմ քննարկման առարկա դարձնել Առուշ Առուշանյանի լիազորությունները դադարեցնելու հարցը և օրենքով սահմանված վերոնշյալ ժամկետում արդյունքների մասին տեղեկացնել Հանձնաժողովին:

Միաժամանակ, տեղեկացնում եմ, որ կից նյութերն ըստ ցանկի լրացուցիչ կուղարկվեն Գորիսի համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային փոստի (gorismunicipality@gmail.com) միջոցով:

Առդիր՝ ցանկ, եզրակացություն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ,
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**

Կատարող՝ Տ. Մովսիսյան
Հանձնաժողովի վարույթների և իրավական ապահովման վարչություն
Հեռ. (012) 77-77-46